Արձանագրություն N 4

ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով *գնանշման հարցման* **ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

20/06/2018թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

աշխատակազմի տնտեսական բաժնի պետ Հ. Նիկողոսյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝

աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ակտերի փորձաքննության և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր մասնագետ Դ.Դավթյան

աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության առաջատար մասնագետ Գ.Մանուկյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

աշխատակազմի տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան

աշխատակազմի տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝

աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Մ.Կարապետյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն,

2. «ՀՀ ԳՆ ԳՀԾՁԲ-18/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.7 կետով սահմանվել է, որ գյանին առաջարկին պետք է կցվի նաև պայմանագրի նախագծի մաս կազմող 1.1 հավելվածի լրացված տարբերակը:

ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցի կողմից չի ներկայացվել վերը նշված հավելվածը, որի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

Ուստի ծանուցել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և մրցույթը համարում է չկայացած:

Մասնակցից պահանջել Հրավերի Պայմանագրի 1,1 հավելվածով սահմանված գնացուցակի բացվածքը:

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	Կարկոմավտո սերվիս ՍՊԸ	1,2,3,4,5,6,7,8,

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/27** ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը 2018 թվականի հունիսի 25-ին 10:00-ին շենք՝ ք. Երևան,Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Հ.Նիկողոսյան

Բացող անդամներ՝ Դ.Դավթյան

Գ.Մանուկյան

Գնահատող անդամներ՝ Հ. Ավետիսյան

Ռ.Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Կարապետյան